

== || ==

Պարիտարներ բոլոր յերկրների, միացե՛ք!

329.15(47.925)

**ԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԿՈՒՍՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՆ,
ՄԱՐԶԿՈՄՆԵՐԻՆ, ՇՐՋԿՈՄՆԵՐԻՆ, ԲԶԻՋՆԵ-
ՐԻՆ, ՅԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԱՆԳԱՄՆԵՐԻՆ**

**ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՍՏՈՐԻՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ
ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

(Համկոմկուսի Անդրբերկովի 1931 թ. փետրվարի 9-ի
վորոճումը)



ՊԵՏԱԿՈՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1931

**ՀԱՄԿՈՄԿՈՒՄԻ ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ 1931 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ**

1. Փետրվարի 15-ին անցկացնել Անդրկովկասի բոլոր ստորին կուսորգանների (ցեխային կազմակերպիչների, խմբակային կազմակերպիչների, բջիջների և կուսկույրերի կոմիտեների, բյուրոների, կայարանային և գործարանային կոմիտեների) վերընտրութունը:

2. Ազգային կոմկուսների կենտկոմներին և մարզկոմներին ու շրջկոմներին առաջարկվում է միջոցներ ձեռք առնել, վոր բոլոր բջիջներում լայն չափով բռնարկվի Համկոմկուսի Անդրյերկումի նամակը կուսակցական ստորին որգանների վերընտրության մասին:

3. Հաշվի առնելով վերընտրությունների անցյալ վարձը, Անդրյերկումն առաջարկում է ստեղծել բջիջների բյուրոների աշխատանքն ստուգող հատուկ համահաժողովներ և լայն ներգրավելով կուսակցական մասսան (բրիգադներ կազմելով ըստ առանձին ճյուղերի), այդ աշխատանքը կատարել վարպետ մասսայական մեծ ստուգում:

4. Պարտավորեցնել կենտկոմներին, մարզկոմներին և շրջկոմներին՝ միջոցներ ձեռք առնել, վոր բջիջներին ղեկավարություն և ռզմություն ցույց տրվի վերընտրությունների ամբողջ ընթացքում, ուղարկելով տեղերին կենտկոմների և մարզկոմների անդամներին և պատասխանատու հրահանգիչներին:

ՊԵՏՐՎԱՐԻ ՏՊԱՐԱՆ 1542
ԳՐԱՌԵՊ. 6239 (Բ)
ՊԱՏՎԵՐ 1250
ՑԻՐԱԺ 5000

5. Անհրաժեշտ համարել Յերկրյա մի բյուրոյի անդամներին և պատասխանատու հրահանգիչներին ուղարկել գյուղական արտադրական բջիջները՝ վերընտրություններին մասնակցելու նպատակով:

6. Ապահովել վերընտրությունների ընթացքի լուսարձանումը յերկրային, հանրապետական ու շրջանային մամուլում և գործարանային պատի թերթերում:

7. Համկոմկուսի Անդրյերկրյա մի կազմաթմինն առաջարկվում է՝ կազմակերպել վերընտրությունների ընթացքի ընտրովի հետազոտումը և ստուգումը:

ՄԵՐ ՀԱՁՈՂՈՒՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԵՑԻՆ ԱՆԴՐՈՒՅԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԶՄՅԻ ՈՒԺԵՂԱՑՈՒՄԸ

Հնգամյակի վերջին յերկու տարիները հանդիսացան կապիտալիստական տարրերի վրա գործվող սոցիալիստական ծավալուն արշավի, սոցիալիստական շինարարութան բարձր տեմպի շրջան: Կուսակցութան լենինյան ճիշտ քաղաքականութունը ապահովեց Սորհրդային Միութան սոցիալիստական ինդուստրացման հորը աճումը: Այդ աճումը արժատական բեկում ստեղծեց զեպի գյուղատնտեսութան սոցիալիստական դարգացումը: Կոտնտեսութունների և խորհանտեսությունների շինարարութան ասպարիզում մեր ձեռք բերած մեծագույն հաջողություններով, կուլակութան, վորպես գասակարգի, վերացման քաղաքականութամբ, վոր անշեղորեն կիրառվում է համատարած կուլեկտիվացման բազայի վրա, հիմնականում լուծված և հացահատիկային պրոբլեմը և հսկայական առանջադիմություն և կատարված սոցիալիստական անամարուծութան կազմակերպման արդարիզում:

ՀԱՅԿԿԵՆՏՐԱԿԱՆ
ՍՏՄԵՆԴԱՆԻ
1-297499

Արդյունաբերութան և գյուղատնտեսութան սոցիալիստական շինարարութան ասպարիզում մեր ձեռք բերած հսկայական հաջողություններին ուղեկցել են բանվոր գասակարգի քանակական աճումը, գործադրկութան վերացումը հիմնականում, աշխատավորութան նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացումը և բանվորները ունեւ աշխատավարձի ավելացումը: ԽՍՀՄ-ի տնտեսական և կուլտուրական վերելքում վճռական դեր խաղաց բանվոր գասակարգի և կոպտնտեսականների միլիոնավոր մասսաների ակտիվութան և աշխատանքային ստեղծագործական խանդավառութան աճումը:

Շնորհիվ հիմնական դժի անշեղ կիրառմանը, շնորհիվ յերկու Ֆրոնտում—այլալ ետապի գլխավոր վտանգ աջ թեւքման և արոցկիզմի դեմ, ինչպես և այդ թեքումին ցուցաբերվող հաշտվողականութան, յերկերեւթյան և աջ—«ձախ» բլոկի դեմ մղվող անողք պայքարի, կուսակցությունը ձեռք բերեց մեծագույն հաջողություններ, վորոնք վորոշեցին ԽՍՀՄ-ի թեվալիստում սոցիալիզմի շրջանը:

Այդ արդյունքները, վորոնք վայլուն կերպով հատատեցին պլանների կատարման որչեկտիվ հնարավորությունները, սոցիալիստական շինարարութան ծավալման մեր ընդունած տեմպերի միանգամայն իրագործելի լինելը, մեզ հնարավորություն տվին «Հընգամյակը չորս տարում» լողունըն իրագործելու տեսակետից վճռական 1931 թվականի համար ընդունել ավելի ընդարձակ պլաններ, վորոնց կատարումից է կախված սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը հնգամյակի 3-րդ տարում:

Սոցիալիստական շինարարութեան ասպարիզում
Խորհրդային Միութեան ձեռք բերած խոշոր հաջողու-
թյուններն ապահովեցին Անդրֆեդերացիայի տնտեսա-
կան բազայի ուժեղացումը, պրոլետարիատի գեղատա-
տուրայի ամրացումը, ազգային խաղաղութեան ամրա-
պնդումը և նորանոր նախադրյալներ պատրաստեցին
արագացնելու ԱՍՖԽՀ-ի սոցիալիստական ինդուստրաց-
ման և ժողովրդական տնտեսութեան տեխնիկական ու
սոցիալական վերակառուցման տեմպը:

Հնգամյակի 2-րդ տարում նավթի հանույթն ավե-
լացել է 19 տոկոսով, ալսինքն՝ 40 տոկոսով ավելի
1913 թվականի հանույթից: Անդր-ԺՏԳԽ-ի պլանավոր-
րած արդյունաբերութեան ընդհանուր արտադրանքը
հնգամյակի առաջին տարվա հետ համեմատած 1929-30
տարում ավելացել է 58 տոկոսով: ԱՍՖԽՀ-ի ամբողջ
արդյունաբերութեան հիմնական ներդրումներն ավե-
ցել են 60 տոկոսով, պետական բյուջեն ավելացել է
տոկոսով, տեխնիկական «մշակույթների տարածու-
թյունը՝ 30 տոկոսով, կոլեկտիվացած տնտեսութուն-
ների թիվը 1928-29 թվականի 1,4 տոկոսից հնգամյակի
2-րդ տարում հասել է 17,6 տոկոսի:

ՀՄՏՈՐԵՆ ԳԼԽԱՎՈՐԵԼ ՄԱՍՍԱՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒ- ԹՅՈՒՆԸ

Անդրկովկասի կոմունիստական կազմակերպու-
թյունները կուսակցական ստորին օրգանների վերընտ-
րութեան շրջանը թեմակոխում են, լրիվ իրազործած
չլինելով նավթի, բամբակի, թեյի և ԱՍՖԽՀ-ի ժողո-
վրդական տնտեսութեան մյուս ճյուղերի 1930 թվական

նի պլանները: Բոլոր իրական հնարավորություններն
ունենալով, կուսակցական կազմակերպությունները
չկատարեցին այդ պլանները, վորովհետև նրանց մոտ
«պակասեց ճիշտ ղեկավարելու հմտությունը» (ՄՏԱ-
ԼԻՆ), այնպես ղեկավարելու, վոր այդ իրական հնա-
րավորությունները կենսագործվեն: Նրանք հմտու-
թյուն չունեցան բայլչեիկորեն պայքարելու տեմպի
համար, հմտություն չունեցան բավարար չափով կազ-
մակերպելու և գլխավորելու մասսաների ակտիվու-
թյունը:

1931 թվականի ԱՍՖԽՀ-ի ժողովրդական տնտեսու-
թյան պլանը գրավորեն գերադանցում է նախորդ տա-
րիների պլաններին: 15-327 հազար տոնն նավթ,
"ՊՏԳԽ-ի պլանավորած արդյունաբերութեան
արտադրանքի աճումը 66 տոկոսով, Անդրյերկաթուղի-
րի՝ 12 հազար տոնն ապրանքաշրջանառությունը,
բյուջեյի աճումը 50 տոկոսով, 1506 հազար հեկտար
գարնանացան, 400 հազար հեկտար տեխնիկական մը-
շակույթներ, 250 հազար հեկտար բամբակ, բամբա-
կազործական շրջաններում տնտեսությունների 50 տո-
կոսի կոլեկտիվացումը, ԱՍՖԽՀ-ի գյուղացիական
բոլոր տնտեսությունների -5 տոկոսի կոլեկտիվացումը
—սրանք են բայլչեիկների 100 հազարանոց կազմա-
կերպութեան, Անդրկովկասյան Ֆեդերացիայի միլի-
ոնավոր բանվորների և գյուղացիների հիմնական պար-
տավորությունները Համկոմկոուսի և ամբողջ Խորհրդ-
դային Միութեան պրոլետարիատի առաջ:

Այդ միանգամայն իրական պլանների կենսագոր-
ծումն Անդրկովկասի ամբողջ կուսակցական կազմա-
կերպությունից սլահանջում է ուժերի մեծագույն լա-

բում, առաջելազույն կազմակերպված և միասնական կամք: Նա պահանջում է, վոր բոլոր բայլչեիկներն եւ դտնվեն իրենց բարձրության վրա, վորպես բանվորների, կոլտնտեսականների, չքավորների և միջակների միլիոնավոր մասսաների ակտիվության ու խանդավառության նոր վերելքը կազմակերպողներ:

Անդրկովկասում հնգամյակի 3-րդ տարվա առաջին ամսվա՝ հունվարի ցուցանիշներն անբավարար են: Նավթի հանույթի պլանը կատարված է միայն 95,8 տոկոսով, նավթի վերամշակման ծրագիրը՝ 92,5 տոկոսով, միջոցների մոբիլիզացիան՝ 59,9 տոկոսով, խոշոր անասունների մթերումը՝ 60 տոկոսով: Հացամթերումների տարեկան պլանը մինչև փետրվարի 1-ը կատարված է 88,5 տոկոսով, ձմեռվա գյուղատնտեսական աշխատանքները կատարված են՝ 25,7 տոկոսով: Թույլ է ընթանում գյուղերի, կոլտնտեսութունների ու խորհրդատեսութունների և մեքենա-տրակտորային կայանների նախապատրաստումը գարնանացանին: Տնտեսական-քաղաքական կարևորագույն խնդիրների կատարման այս ցուցանիշները, վորոնք կազմում են ժողովրդական տնտեսության 1931 թվականի պլանի կարևորագույն մասը, ազդարարում են, վոր մի շարք կուսկազմակերպություններ ոպորտունիստական հույսեր են դնում «ինքնահոսի» վրա, չգիտեն կազմակերպել և մոբիլիզացիայի յենթարկել մասսաների ուժը, ուշադրությունն ու յեռանդը ժողովրդական տնտեսության պլանի ամենապատասխանատու խնդիրների կատարման համար մղվող պայքարում:

Քաղաքական-տնտեսական և մոչ մի խնդիր չի կարելի լուծել «տարերայնորեն», «ինքնահոսով»: 1931

թվականի մարտական խնդիրները կուսակցական բոլոր կազմակերպություններից պահանջում են բայլչեիկյան համառություն, հախուռն թափ, պահանջում են բարձրացնել աշխատանքի տեմպը բոլոր բնագավառներում: Այն պայքարը, վորը մղվում է նավթի, արդյունաբերության, տրանսպորտի, գարնանացանի, բամբակի, թեյի, կոլեկտիվացման, հացահատիկի և անասունների մթերման ու դրամական միջոցների կուտակման պլանները լրիվ կատարելու համար, այն պայքարը, վոր մղվում է տնտեսական և կուլտուրական չինարարության բոլոր ճյուղերի բոլոր պլանները կատարելու համար, հանդիսանում է կուսակցության հիմնական գծի համար մղվող պայքար:

Անդրկովկասի կուսակցական բոլոր կազմակերպությունների յերեսը դարձնել դեպի 1931 թվականի խնդիրները—այս նշանաբանով պետք է կատարվեն ստորին կուսորդանների վերընտրությունները:

«Կուսակցությունը դասակարգի գիտակից, առաջավոր խափն է, նրա ավանդարդը: Այդ ավանդարդի ուժը 10 անգամ, 100 անգամ ավելի մեծ է, քան նրա թիվը: Հնարավոր է այդ, կարող է 100-ի ուժը գերազանցել 1000-ի ուժից: Կարող է և ղերազանցում է, յերբ այդ 100-ը կազմակերպված է: Կազմակերպութ. տասնապատկում է ուժերը: Ի միջի այլոց առաջավոր ջոկատի գիտակցությունն, արտահայտվում է նաև նրանով, վոր նա գիտե կազմակերպվել: Իսկ կազմակերպվելով, նա ստանում է միասնական կամք: Առաջավոր հազարի, հարյուր հազարի, միլիոնի այդ միասնական կամքը դառնում է դասակարգի կամքը» (Լենին):

Կուսակցական կազմակերպությունները պետք է

միջոցներ ձեռք առնեն, վոր վերընտրությունների ընթացքում իրենց ամեն մի ողակը ցուցաբերի այնպիսի մարտունակություն, կազմակերպվածություն և կարգապահության, վոր տնտեսական Ֆրոնտի յուրաքանչյուր ճակատամասում (հանք, գործարան, դեպո, ցեխ, գյուղ, խորհրդատեսություն, մեքենա-տրակտորային կայան, կոլտնտեսություն) ապահովվի յուրաքանչյուր բջիջի, յուրաքանչյուր տնտեսական և արհամիռութենական որգանի, բոլոր կոմունիստների, ամբողջ բանվորական, կոլտնտեսական և գյուղացիության չքավոր ու միջակ մասսայի պատրաստությունը՝ լարված աշխատանք կատարելու 1931 թվականի փողովըրդական տնտեսության պլանի լրիվ կատարման ասպարիզում:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԱՄԵՆ ԱՍՆՈՂՈՔ ՊԱՅՔԱՐԸ ՅԵՐԿՈՒ ՖՐՈՆՏՈՎ

Հնգամյակի Յ-րդ տարվա խնդիրների լուծման ճանապարհին Անդրկովկասի կազմակերպությունների առաջ ծառայած են դեռևս մեծ դժվարություններ, վորոնց հիմքն է կազմում նախ և առաջ դասակարգային թշնամու դիմադրության ուժեղացումը յերկրում և յերկրից դուրս: Դասակարգային պայքարի սրման պայմաններում սոցիալիստական շինարարության ամբողջ Ֆրոնտում ել ավելի ծավալուն արշավ կազմակերպելու գործը պահանջում է, վոր նախ և առաջ կուսակցությունը մոբիլիզացիայի յենթարկի իրեն: «Բաշլե-վիկյան արշավի ելությունն է՝ մոբիլիզացիայի յենթարկել իրեն, կուսակցությունը՝ արշավի ամբողջ

գործը կազմակերպելու համար, ամրացնել և սրել կուսակցական կազմակերպությունը, վունդելով այնտեղից բյուրոկրատիզմի և այլասերման տարրերը, մեկուսացնելով և դուրս մղելով աջ և «ձախ» թեքումներ արտահայտողներին, առաջ քաշելով իսկական կայուն լենինյաններին» (Ի. ՍՏԱԼԻՆ):

Կուսակցությունը ջախջախեց հակահեղափոխական տրոցկիզմը, կատարելապես մերկացրեց կուսակային գործակալությունը մեր կուսակցության մեջ՝ աջ ոպորտունիզմը, ջախջախեց Սիրցով-Լոմինաձեյի աջ «ձախ» բլոկի դժվարություններից խուճապով համակված պլատֆորմը, վորը փորձում էր ոգտագործել այդ դժվարությունները: Կուսակցական կազմակերպությունների խնդիրն է՝ շարունակել իր ամենամանողոք պայքարը կուսակցության մեջ կուլակային գործակալության՝ ներկա ետապի ամենազլխավոր վտանգի աջ ոպորտունիզմի դեմ, հակահեղափոխական տրոցկիզմի մնացորդների, աջ «ձախ» բլոկի հետեվորդների և ամեն տեսակի թեքումներին ցուցաբերվող հաշտվողականության դեմ, վորոնք դանդաղեցնում են մեր առաջընթացը: Ներկայումս, յերբ գաղափարականորեն և կազմակերպչորեն ջախջախված աջ ոպորտունիստները և «ձախ» կիսատրոցկիստները չեն համարձակվում բացահայտորեն ցույց տալ իրենց իսկական դեմքը և խոսքով համաձայնվում են կուսակցության հիմնական դժին, գործնականում կատարում են այնպիսի աշխատանք, վորն ըստ ելության ձախողության է մատնում լենինյան դիժը: Կուսակցական բոլոր կազմակերպությունների խնդիրն է՝ սրել իրենց պայքարը գործնական աշխատանքում արտահայտվող ոպորտուն-

նիզմի դեմ, եւ ավելի բարձրացնել իրենց շարքերի բայլչեվիկյան զգոնութիւնը, տոկունութիւնն ու մարտունակութիւնը, անողորմաբար մերկացնելով յերկերեսութիւնը:

Նկատի ունենալով դանակարգային պայքարի սըր-վելը, վորը կոստակցութեան շարքերում ակտիվացնում է ազգային թեքումները դեպի ուսումնական մեծապետա-կան և տեղական շովինիզմը (վրացական, թուրքական, հայկական), վորը թուլացնում է ԱՍԾԽՀ-ի ժողովուրդների միասնութիւնը և նպաստում է ինտեր-վենցիային, կուսակցական կազմակերպութիւնները պետք է ուժեղացնեն իրենց պայքարը ուսումնական մեծա-պետական շովինիզմի դեմ, վոր տվյալ ետապում գըը-խափոր վտանգն է ազգային հարցում, և տեղական շո-վինիզմի դեմ, վոչ մի դեպքում թույլ չտալով փոխա-դրելու Ֆեդերալիզմի սկզբունքները Անդրկովկասի կու-սակցական կազմակերպութիւնների աշխատանքի աս-պարեզը:

Կուսակցական ստորին որդանների վերընտրու-թյան ժամանակ պետք է ամբողջ հասակով առաջա-դըրվեն կուլտուրական հեղափոխութեան, ազգային կուլտուրական շինարարութեան պրոբլեմները: Կուսակ-ցական մասսաների ուշադրութեան կենտրոնը պետք է կազմի լենինյան ազգ. քաղաքականութեան դործնական կիրառումը, ազգային անհավասարութեան տարրերի վերացումը, ձեւով ազգային՝ բովանդակութեամբ պրոլետարական կուլտուրաների լայն զարգացումը և պրոլետարական ազգային կադրերի պատրաստումը, ընդհանուր պարտադիր տարրական ուսուցման կիրա-

ռումը, անդրադիտութեան վերացումը, ստորին մա-մուլի բարելավումը, նրա՝ վորպես մասսաների մոբի-լիզացիայի և սոցիալիստական արշավի ծավալման գործիքի, դերի բարձրացումը:

ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԿՈՒՍԱՃՍԱՆ ԳՈՐԾԸ

Կուսակցական կազմակերպութիւնների կարեւո-րագույն խնդիրն է՝ եւ՛ ավելի ընդարձակել կուսակ-ցութեան շարքերն այն հսկայական սեղերվներով, վո-րոնք անչեղորեն աճում են բանվոր դասակարգի մեջ: Գլխավորելով բանվորական մասսաների քաղաքական ու արտադրական հարաձուլն ակտիվութիւնը, եւ՛ ավե-լի բարձրացնելով սոցմրցումն ու հարվածայնութիւնը և աշխատանքային կարգապահութիւնն ու արտադրու-թյան ռացիոնալացումը, բարձրացնելով բանվորական ակտիվի քաղաքական դաստիարակութիւնը, կուսակ-ցական կազմակերպութիւնները պետք է զգալիորեն բարձրացնեն կուսակցութեան աճման տեմպերը հար-վածայններով, կադրային ակտիվ բանվորներով, բանվորուհիներով և կոմյերիտուհիներով: Կուսակ-ցութեան շարքերն ընդարձակելու համար կատարվող ամբողջ աշխատանքում պետք է հատուկ ուշադրու-թիւն նվիրել կուսակցութեան շարքերն ազգային պրո-լետարական կադրեր ներգրավելու գործին: Գյուղում ամբակուռ, մարտունակ կազմակերպութիւններ ստեղ-ծելու համար անհրաժեշտ է ուժեղացնել առաջավոր բատրակների, կոլտնտեսականների, ակտիվիստ չքա-վորների, կոմյերիտականների, գեղջկուհիների, բատ-րակուհիների և չքավոր կանանց լավագույն մասի հո-

սանքը գեպի կուսակցութեան շարքերը: Կուսակցութեան արձման համար կատարվող աշխատանքի հետագա ծավալման բաղկացուցիչ մասը պետք է կազմի կուսակցութեան մեջ ընդունվածների գաղափարական և քաղաքական ամրացումը, նրանց բայլելիկյան դաստիարակումը գործնական աշխատանքում: Կուսակցական կազմակերպությունների հատուկ հոգատարութեան անարկա պետք է լինի Անդրկովկասի ժողովրդական տնտեսութեան համար դաստիարակել և պատրաստել վորակյալ նոր, մանավանդ աղբային կաղեր բանվոր դասակարգային շարքերից, վորոնք կանգնած լինեն սոցիալիստական շինարարութեան ներկա պահանջներին մակարդակի վրա:

Ժողովրդական տնտեսութեան 1931 թվականի պլանը կատարելու համար կուսակցական կազմակերպությունները պետք է կիպ մոտենան սոցշինարարութեան ֆրոնտի կոնկրետ ղեկավարմանը: Բայլելիկորեն պետք է տիրապետեն գործարանի, խորհտնտեսութեան, կոլտնտեսութեան և մեքենատրակտորային կայանների տեխնիկային, եկոնոմիկային և ֆինանսներին: Բայլելիկից պահանջվում է վոչ միայն ընդունել կուսակցութեան հիմնական գիծը, այլև ակտիվ պայքար մղել այդ գծի իրագործման համար: Բայլելիկը մասնագետների կազմակերպիչը պետք է լինի այն ճյուղում, վորտեղ հանձնարարել է նրան աշխատել կուսակցութեանը: Բայլելիկը պետք է թափանցի ամեն մի կոնկրետ գործի, ամեն մի մանրամասնութեան խորքը: Դրանումն է յերաշխիքը այն բանի, վոր կոմունիստի դերը, վորպես մասսաների կազմակերպիչ արտադրութեան և գյուղատնտեսութեան ասպարիզում,

խորհրդային ու կոոսյերատիվ ապարատում և ԲՈՒՀ-երում, չի սահմանափակվի այսպես կոչված ընդհանուր ղեկավարութեամբ, յերկար չըջաբերականներ և հրահանգներ գրելով, առանց նկատելու միևնույն ժամանակ խորթ տարրերի և վնասարարների կատարած այն դործերը, վորոնք վիժեցնում են կուսակցութեան կարեվորագույն խնդիրները և դրանով իսկ դանդաղեցնում են մեր պլանների կատարումը. դրանումն է յերաշխիքը, վոր արտադրութեան մեջ և տրանսպորտում կիրադործվի կառավարման միանձնյա սիստեմը: Արտադրութեանը ճիշտ ղեկավարել իմանալը յերաշխիք է, վոր մեր բոլոր պլանները լրիվ կկատարվեն:

Բանվորական մասսաների ակտիվութեան մոբիլիզացիան արդյունաբերութեան զարգացման, գյուղատնտեսութեան կոլեկտիվացման տեմպն արագացնելու, բյուրոկրատիզմի, դասակարգային թշնամիների և վնասարարների դեմ պայքարելու համար պահանջվում է, վոր կուսակցութեանը լայն մասսաների հետ կապող բոլոր ողակներն աշխատեն մարտական թափով: Անհրաժեշտ է «արհմիութենական, կոոպերատիվ, խորհրդային և մասսայական մյուս բոլոր կազմակերպությունների ամբողջ գործնական աշխատանքի վերակառուցումը կազմակերպել համաձայն վերակառուցման չըջանի պահանջների, ստեղծել նրանցից ամենակտիվ հեղափոխական աշխատողների կորիզ, դուրս մղելով նրանցից և մեկուսացնելով ոպորտունիստական, տրեդյունիոնիստական ու բյուրոկրատական տարրերը, վոնդելով նրանցից այլասերված, խորթ տարրերը, ներքեվից առաջ

բաշելով նոր աշխատողներ» (ՍՏԱԼԻՆ) : Ան-
հրաժեշտ է բարձրացնել խորհուրդների դերը կուսակ-
ցության հիմնական դիժը գործնականում կիրառելու
ասպարիզում : Խորհուրդները պետք է ինչպես հարկն է
դեկավարեն տնտեսությունը, դործնականորեն զբաղ-
վեն սոցմբջման, հարվածայնություն, կոլտնտեսական
շինարարության, բանվորների ապրանքավորման, աշ-
խատավորների կենցաղային և կուլտուրական պահանջ-
ների սպասարկման հարցերով : Իրենց ամբողջ գործ-
նական-մասսայական աշխատանքում հենվելով խոր-
հրդային ակտիվի վրա, նախ և առաջ արտա-
դրություն մեջ հարվածայինների և դյուրում՝ կոլ-
տնտեսականների և չքավորների վրա, խորհուրդնե-
րը կուսակցական կազմակերպության ղեկավարու-
թյամբ պետք է ամրացնեն իրենց կապը մասսաների
հետ, ներգրավեն սոցիալիզմ ակտիվ կառուցողների
չարքերը բանվորների, կոլտնտեսականների, չքավոր
և միջակ մենատնտեսների, մանավանդ բանվորուհի-
ների, գեղջկուհիների և յերիտասարդության նորանոր
մասսաներ :

Խորհուրդների վերակառուցումն իրականացնելու
համար կուսակցական կազմակերպությունները պետք
է իրոք վճռական պայքար մղեն տեղական խորհուրդ-
ների աշխատանքում մինչև այժմ ել հաճախ դոյու-
թյուն ունեցող աջ սպորտունիտատական պրակտիկայի
դեմ, սպորտարական ինքնաքննադատության հիման
վրա ել ալելի լայն պայքար ծավալեն խորհրդային
ապարատի բյուրոկրատիզմի դեմ :

Արհմիությունների խոշորացման արագ իրակա-
նացումը նրանց ակտիվ կմոտեցնի արդժիվայինի հա-
մար մղվող պայքարի կոնկրետ մասնակցությունը,

26666-1

բանվորական մասսաների կուլտուրական և կենցաղա-
յին պահանջների լավագույն սպասարկմանը : Արհմի-
ությունական կազմակերպություններն ամենորյա մաս-
նակցություն ցույց տալով արտադրության մեջ արդ-
ժիվայինի համար մղվող պայքարին, պետք է մոբիլի-
զացիայի յենթարկեն բանվորական մասսաների կամքն
ու յեռանդը, հնգամյակի Յ-րդ տարվա ծրագիրը կա-
տարելու և դերակատարելու համար : Արհմիությունա-
կան կազմակերպությունների վերակառուցումն իրա-
կանացնելու համար անհրաժեշտ է վճռաբար դուրս
մղել սպորտունիտատական և տրեդյունիտատական
տարրերը, ծավալել սպորտարական ինքնաքննադա-
տությունը, հիմք ընդունելով բանվորական մասսանե-
րի ստեղծագործական յեռանդը, նախաձեռնությունը
1931 թվականի մարտական պլանների կատարման աս-
պարիզում :

ՍՊԱՌԿՈՊԵՐԱՑԻԱՆ ՊԵՏԲ Ե ԴՍՐՁՆԵԼ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԼԾԱԿՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Սպառողական կոոպերացիայի աշխատանքի վերա-
կառուցումն այժմ սերտորեն կապված է արտադրու-
թյան, հարվածային շարժման և իրական աշխատա-
վարձի բարձրացման հետ : Սպառողական կոոպերա-
ցիան նախ և առաջ պետք է պահանջի սոցիալիստական
շինարարության կարեկրթույն ճակատամասերը,
հայթայթման գործը պետք է կապի «արտադրական
պլանների կատարման աշխատանքի արտադրողականու-
թյան բարձրացման հետ, բանվորական ուժի հոսունու-
թյան դեմ մղվող պայքարի և աշխատանքի սոցիալիս-
տական



առկան ձևերի (սոցմրցում, հարվածախուլթյուն և այլն) խրախուսման հետ» (Համկոմկուսի Կենտկոմի և ԿՎՀ-ի ղեկավարության պլենումի բանաձևից) :

Գյուղում «արդյունաբերական ապրանքների հայթայթման ասպարիզում անհրաժեշտ է առավելություն տալ կոլտնտեսականներին, կապելով հայթայթման սիստեմը արտադրական պլանների և մթերումների ծրագրերի հաջող կատարման հետ» (Համկոմկուսի Կենտկոմի և ԿՎՀ-ի ղեկավարության պլենումի բանաձևից) :

Կուսակցական կազմակերպությունների ուշադրության կենտրոնը պետք է կազմի փակ-բաշխիչների, ճաշարանների և հանրային սնունդի բնագավառում կատարվող աշխատանքի բարելավումը, գյուղի սպառկոսպերացիայի ցանցի արմատական բարելավումը և կոլտնտեսականների ու չքավորների ղեկավար դերի ապահովումն այդ ցանցում :

Կոոպերատիվ կազմակերպությունների վերակառուցումն իրականացնելու համար անհրաժեշտ է վճարաբար մաքրել սպառկոոպերացիայի ապարատը նրա մեջ խցկված մենչեիկյան, դաշնակ և մուսավաթական, բյուրոկրատիկ տարրերից, վերացնել հայթայթման աշխատանքի խզումը մասսաներից, մոբիլիզացիայի յենթարկելով սպառողների կոոպերացված մասսաներին հայթայթման կազմակերպման շուրջը, վճռական պայքար մղելով սպառկոոպերացիայի աշխատանքում գոյություն ունեցող աջ ուղորտունիստական պրակտիկայի դեմ :

Կուսակցական ստորին որդանների վերընտրությունները պետք է ընդհանուր ստուգում հանդիսա-

նան, թե կազմակերպության յուրաքանչյուր ողակը (և նրա ղեկավար որդանը) իր ամենորյա գործնական աշխատանքում վորքան կարողացել է մոբիլիզացիայի յենթարկել մասսաներին, սոցիալիստական շինարարության պլանները կատարելու և դերակատարելու համար : Առավելագույն չափով ծավալելով բայլչեիկյան ինքնաքննադատությունը, «ասանց նկատի ունենալու անձնավորությունը», «անհրաժեշտ է կասեցնել այն բոլոր փորձերը, վորով ինքնաքննադատության դիմակի տակ աշխատում են անցկացնել ուղորտունիստական հայացքներ, միաժամանակ անհրաժեշտ է վճռական պայքար մղել ամեն տեսակ ջննդատական դիտողությունը «թեքում» համարելու փորձերի դեմ : Անհրաժեշտ է ապահովել կուսակցական մասսաների առավելագույն ակտիվությունը քարտուղարների, բյուրոների և կոմիտեների ընտրության ժամանակ և առաջ քաշել կուսակցական ստորին ողակների ղեկավար որդաններում աշխատելու համար կայուն լենինյաններին, արտադրության հարվածայիններին, բատրակներին, կոլտնտեսականներին և չքավորներին : Միմիայն այդ պայմաններում մասսաները հնարավորություն կունենան ստուգել ստորին կուսորդանների քաղաքական դիժն ու գործնական աշխատանքը և վերահսկողություն սահմանել նրա վրա, իրոք ուղղել նրանց աշխատանքի սխալներն ու թերությունները և մաքրել նրանց շարքերը կուլակային կապիտալիստական տարրերի հետ կապվող անպետք տարրերից : Միմիայն այդ պայմաններում կարելի չե լուծել իրեն կուսակցության մոբիլիզացիայի հարցը՝ բայլչեիկյան արչավ կազմակերպելու համար :

ՈՒԺԵՂԱՑՆԵԼ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄՅԵՐԻՑ-ՄՈՒԹՅԱՆ ԵՎԱՏԱՄԱՄԲ

Կուսակցական կազմակերպութիւնները աշխատանքը վորոշող հիմնական մոմենտներից մեկը պետք է լինի կուս. կազմակերպութեան ուչազրուեթյան շարքի և ղեկավարութեան վորակը կոմյերիտմիութեան աշխատանքի ասպարիզում: Անհրաժեշտ է ստորին կուսորգաններում բարձրացնել պատասխանատուութեան գերակցութիւնը կոմյերիտմիութեան աշխատանքի վիճակի համար: Կուսակցական կազմակերպութիւնները խնդիրն է ամրացնել բայլչեիկյան ղեկավարութիւնը կոմյերիտմիութեան նկատմամբ, բարձրացնել նրա մարտունակութիւնը հիմնական գծի համար և դասակարգային թշնամու ու կուսակցութեան մեջ նրա գործակալութեան դեմ մղվող պայքարում Համ ԼԿՅԵՄ-ի Գ-րդ համագումարի վորոշումները լրիվ կենսագործումը պետք է դառնա կուսակցական բոլոր կազմակերպութիւնների գործը:

Կոմյերիտմիութիւնը, վորպէս կուսակցութեան առաջին և լավագույն ոգնականը, պետք է գործնականորեն մասնակցի տնտեսական շինարարութեանը, բարձրացնի իր դերը տնտեսական-քաղաքական հիմնական կամպանիաների կիրառման ասպարիզում և արտադրութեան մեջ, գյուղում, խորհրդային ապարատում, ԲՈՒՀ-երում իր կատարած գործնական աշխատանքի ամեն մի քայլը պետք է համաձայնեցնի կուսակցութեան սկզբունքային դիրքավորումներին: Անհրաժեշտ է, վոր կոմյերիտմիութիւնը տիրապետի արտադրութեան մանրամասնութիւններին, գյուղում տա-

րածվող նոր տեխնիկային: Կոմյերիտականները բոլորն էլ գլխովին պետք է մասնակցեն սոցմրցմանը և հարվածայնութեանը, ավելի մեծ մասնակցութիւն ցույց տան արհմիութիւնների աշխատանքին, խորհրդային ապարատի աշխատանքի լավագույն կազմակերպմանը: Կուսակցութեան համար մղվող պայքարի Ֆրոնտը պետք է լինի կոմյերիտմիութեան աշխատանքի ամենապատասխանատու բնագավառներից մեկը: Այդ պահանջում է վորակապես ամրացնել գյուղի կոմյերիտմիութիւնը: Մորելիզացիայի յենթարկելով բանվոր և գյուղացի յերիտասարդութեան մասունքի 1931 թվականի մարտական առաջադրանքները կատարելու համար, կոմյերիտմիութիւնը պետք է իր շարքերը ներգրավի ամբողջ բանվոր յերիտասարդութիւնը, լայնորեն գրավի առաջավոր կոլտնտեսական և չքավոր յերիտասարդութիւնը, գյուղի յերիտասարդութեան միակ սկտիվ լավագույն մասին:

Յերկրի պաշտպանութիւնը բարձրացնելու գործում կոմյերիտմիութեան խնդիրն է ընդարձակել և ամրացնել շեֆութիւնը Կարմիր բանակի ղորամասերի վրա: Կոմյերիտմիութեան ղեկավարման ասպարիզում կուսակցական կազմակերպութիւնների առանձնապէս կարեւոր խնդիրն է՝ ուժեղացնել միութեան անդամների ինտերնացիոնալ դաստիարակութիւնը, ամրացնելով Անդրկովկասի բոլոր ժողովուրդների կոմյերիտականների միասնութիւնն ու ղորումը: Պատանի պիտներների շարժման նկատմամբ բայլչեիկյան ղեկավարութիւնն ապահովելու համար անհրաժեշտ է, վոր այդ շարժմանն ուչադրուեթյուն նվիրեն վոչ միայն կոմյերիտական կազմակերպութիւնները, այլ և տեղերի կուսակցական բջիշները:

ԼԱՅՆ ԾԱՎԱԼԵԼ ՄԱՍՍԱՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՆԱՆՑ ՍԵՋ

Հնգամյակի 3-րդ տարվա ծրագրի համար մղվող պայքարն ամենասուր կերպով առաջադրում է կանանց մեջ կատարվող աշխատանքի հարցը: Մի շարք կուսակցական կազմակերպություններ իրենց գործնական աշխատանքում բացահայտորեն թերազնահատում են այդ հարցի քաղաքական ամբողջ կարեվորությունը: Անդրկովկասի արդյունաբերության և բյուրոկրատիայի անվանի ճյուղերի համար, ինչպիսիք են բամբակագործությունը, թեյաբուծությունը, շերամապահությունը և ծխախոտագործությունը, կանանց նոր կադրերի պատրաստումը մեծ նշանակություն ունի 1931 թվականի պլանը կատարելու համար, արդյունաբերության մեջ նոր բանվորներ ներգրավելու, տեխնիկական մշակույթների տարածությունն ընդարձակելու և կոլտնտեսական շարժումը բարձրացնելու համար: Դրա հետ միասին, կանանց մասսայական ներգրավումը սոցիալիստական արդյունաբերության մեջ բացառիկ նըշանակություն ունի ԱՍՖՈՂ-ի ժողովուրդների աշխատավոր կանանց կենցաղը արմատապես վերափոխելու տեսակետից: Ուստի կանանց կադրեր պատրաստելու, կանանց աշխատանքը Անդրկովկասի ժողովրդական տնտեսության մեջ ռացիոնալ կերպով ոգտագործելու հարցերը պետք է պատշաճ տեղ գրավեն բոլոր կուսակցական կազմակերպությունների աշխատանքում: Պետք է լայն ծավալել մասսայական աշխատանքը կանանց մեջ, համապատասխան դարձնել այդ աշխատանքը 5-ամյակի վճռական տարվա խնդիրներին, ներգրավել

կուսակցության և կոմյերիտմիություն շարքերը հանանց առաջավոր ակտիվին, մանավանդ Անդրկովկասյան Ֆեդերացիայի բնիկ ազգություններից:

Վերընտրական կամպանիայի ընթացքում արտադրական և տրանսպորտային բջիջները պետք է խստիվ ստուգեն, թե ինչպես առանձին կոմունիստներ և ամբողջ բջիջներ իրենց անձնական վարքագծով որինակ են հանդիսանում արտադրության մեջ, ինչպես են ոժանդակում նրանք մասսաների հաջող մոբիլիզացիային՝ պայքարելու արտադրական առաջադրանքների (ներքին ռեսուրսների մոբիլիզացիան, աշխատանքի բոլոր վորակական ցուցանիշների բարձրացումը, աշխատանքի արտադրականության և կարգապահության բարձրացումը, ինքնարժեքի իջեցումը և արտադրանքի վորակի բարելավումը) կատարման համար, ինչպես են գլխավորում նրանք կոնկրետ կերպով այն պայքարը, վոր մղվում է սոցիալիստական մրցումը և հարվածայնությունը ծավալելու, արտադրությունը վերակառուցելու և ռացիոնալացնելու համար:

Տրանսպորտի ստորին կուսորգանների վերընտրությունների շուրջը անհրաժեշտ է անհասպաղ ծավալել յերկաթուղային տրանսպորտին վերաբերյալ Համկոմկուսի կենտկոմի և ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի դիմումի ռեսուրսները թյունների կոնկրետ ծրագիր՝ տրանսպորտի աշխատանքում վճռական բեկում ստեղծելու համար: Արտադրական և տրանսպորտային բջիջները անկուսակցական բանվորների առաջ պետք է լայն լուսսարանեն կուսակցական օրդանների առաջիկա վերընտրությունների նշանակությունը և դրանով իսկ ավելի համախմբեն նրանց կուսակցության շուրջը, մասսաների նոր վերելքի կազմակերպման ասպարիղում:

Գյուղում վերընտրական կամպանիան պետք է սերտորեն շարկապվի 1931 թվականի խնդիրների հետ: Յանքի պլանի կատարումը, գոյություն ունեցող կուտնտեսութայունների ամրացումը, չքավոր և միջակ մասսաների դեպի կոլտնտեսութայունները վերակառնոր հոսանքի կազմակերպումը, չքավորների մեջ կատարվող աշխատանքի ծավալումը, նրա և միջակների դաշինքի ամրացումը, գյուղի կապիտալիստական տարրերի (կուլակութայան) վրա հետագա արշավի կազմակերպումը— պետք է դառնա կուսակցական կազմակերպութայունների մարտական խնդիրները:

Կոլտնտեսութայուններում ներքին ճիշտ կանոնադրութայուն սահմանելը, յեկամուտների ճիշտ բաշխումը, կոլտնտեսութայունների ժամանակին նախապատրաստումը դարնանացանին, սոցմրցման և հարվածայնութայան մեթոդների արմատացումը հանդիսանում է կոլեկտիվ տնտեսութայան առավելութայունների լավագույն ցուցադրումը, կոլեկտիվացման հեռագու աճման հզոր լծակը:

Գոյութայուն ունեցող կոլտնտեսութայունների ամրացումը, կոլեկտիվացման նոր վերելքի կազմակերպումը պահանջում են ավելի ուժեղ արշավ գործել կուլակութայան վրա, վորի նկատմամբ Անդրկովկասում առաջմ ուժի մեջ է մնում կուսակցութայան հին լողունգը՝ կուլակութայունը սահմանափակելու և գուրսմղելու մասին, վոր պետք է նախապատրաստի կուլակութայան վորպես դասակարգի վերացումը— համատարած կոլեկտիվացման հիման վրա: Աշխատանքի պրակտիկան (հացահատիկի, բամբակի և անասունների մթերումը, հարկային քաղաքականութայունը, դրամական միջոցների հավաքումը, հողագտագործումը և

ջրագտագործումը, արդյունաբերական ապրանքների մատակարարումը, ներգործման որենքով նախատեսված միջոցների կիրառումը) վկայում է, վոր կուսակցական մի շարք կազմակերպութայուններ, գյուղի աշխատանքում տնտեսական և քաղաքական հարցերը լուծելիս, անընդունակ գտնվեցին պայքարելու կուլակութայան դեմ: Մի շարք վայրերում ինքնակամ կերպով սահմանում են կուլակային տնտեսութայունը վորոշող հատկանիշներ, վորով յերևան չեն բերում կուլակներին: Այդ պրակտիկային գուղընթաց, թուլանում է չքավորների մեջ կատարվող աշխատանքը, անտեսվում է չքավորութայան ուժերի կազմակերպումը՝ նրա և միջակի դաշինքն ուժեղացնելու և կուլակութայան դեմ պայքարելու համար: Անհրաժեշտ է արմատախիլ անել աջոպորտունիստական այդ պրակտիկան, վորը դանդաղեցնում է մեր առաջընթացըը ԱՍՖՆՀ-ի գյուղատնտեսութայան սոցիալիստական վերակառուցման ուղիով:

Գյուղի ստորին կուսակցական որգանների վերընտրութայան ընթացքում պետք է խստիվ ստուգել, թե յուրաքանչյուր կոմունիստ ինչ չափով է մասնակցում կոլտնտեսական շարժմանը, ստուգել գյուղերի, կոլտնտեսութայունների, խորհանտեսութայունների և մեքենատրակտորային կայանների մարտական պատրաստութայունը բայլչևիկյան յերկրորդ դարնան համար: Գարնան նախապատրաստական աշխատանքները պետք է կառուցել այնպես, վոր նրանք ընդարձակեն տեխնիկական մշակութայների տարածութայունը, ավելացնեն բերքատվութայունը, ներգրավեն կոլտնտեսութայունների մեջ չքավոր և միջակ անհատական տնտեսութայուններին:

Գյուղական բջիջները կոլտնտեսական և չքավոր ու

միջակ մասսաների առաջ պետք է լայն լուսաբանեն Համկոմկուսի Կենտկոմի և ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի դիմումը կոնտրակտացիայի մասին, պետք է անհապաղ աշխատանք ծավալեն այդ դիմումն իրականացնելու համար:

ԲՈՒՀ-երի բջիջների հաշվետու վերընտրական կամպանիայի առանցքը պետք է կազմեն բանվոր դասակարգից նոր մասնադեմոնների կազմեր, մանավանդ ազգային պրոլետարական կազմեր պատրաստելու համար մղվող սիստեմատիկ պայքարի ուժեղացումը: Կազմերի նախապատրաստական վորակի ստուգումը պետք է հանդիսանա ԲՈՒՀ-երի բջիջների աշխատանքի վճռական ողակը: Անհրաժեշտ է այդ տեսակետով ըստուգել ղեկավարությունն ուսումնական աշխատանքում, մանավանդ արտադրական պրակտիկայում, վորը հանդիսանում է վոչ միայն ուսման, այլև համապատասխան ձեռնարկությունների արդժինպլանների կատարման բաղկացուցիչ մասը:

Գիտական-հետազոտական հիմնարկների բջիջներում անհրաժեշտ է ստուգել այն ակտիվությունը, վոր ցուցաբերում են գիտական աշխատողները, ուպորտունիզմի և բուրժուական իդեոլոգիայի բոլոր տեսակների դեմ մղվող պայքարի տեսական ճակատում, գիտական-հետազոտական աշխատանքում արմատական չըջադարձ ստեղծել դեպի Ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման հրատապ հարցերը:

Խորհրդային և կոոպերատիվ հիմնարկների բջիջներն իրենց աշխատանքով պետք է միջոցներ ձեռք առնեն իրոք ստուգելու, թե ինչ շարիով է իրագործված կուսակցության և խորհրդային ղեկավար որդանների ընդունած վորոշումը՝ ապարատում խնայողության


ուժեղացնելու հաստատուպես կիրառելու մասին, պետք է ապահովեն մեր վճռական պայքարը խորհրդային և կոոպերատիվ ապարատներում գոյություն ունեցող բյուրոկրատիզմի դեմ: Նրանք պետք է միջոցներ ձեռք առնեն, վոր աշակցություն ցույց տրվի ապարատի աշխատանքի վրա բանվորների և գյուղացիների հաստատած վերահսկողությանը, ապահովեն ապարատի վերակազմումը՝ համաձայն սոցիալիստական շինարարության և աշխատավորության կուլտուրական-կենցաղային հարաճուն պահանջներին:

Ժողովրդական տնտեսության 1931 թ. պլանը մարտական ծրագիր է, վոր ապահովում է ԱՍՖՈՒՀ-ի մեջ մտնող հանրապետությունների ինդուստրացումը և նրանց գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը: Նա մարտական մի ծրագիր է, վոր ամրացնում է Անդրկովկասյան Ֆեդերացիայի տնտեսական բազան, պրոլետարիատի դիկտատուրան և ԱՍՖՈՒՀ-ի բոլոր Ժողովուրդների ինտերնացիոնալ միությունն ու գործակցությունը:

Բայլևեիկյան այդ ծրագրի կատարման շուրջը պետք է սերտորեն համախմբվեն Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների շարքերը:

Ծավալուն սոցիալիստական արշավի ծրագիրն իրագործելու համար, Անդրկովկասի բայլևեիկները կուսակցության լենինյան դրոշի տակ պետք է կազմակերպեն և առաջ տանեն բանվորների, կոլտնտեսականների, չքավորների և միջակների միլիոնավոր մասսաներին:

Համ Կ (բ) Կ Անդրկովկասյան Ֆեդերացիա Կոմիտե,



ԳԻՆԸ Ե ԿԱԴ.

87-19 I

2974



**ՇԿ, ՕբլԿ, ՐայԿ, յայեյկամ և վսեմ շլենամ
Յակորգանիզաչիյ Ուսչոմպարտիյ
Օ քերեվյոբորախ ուսիսի քարտորգանով
(Սոստանովլենիե Յակրայկոմա ՅԿՍ(Բ) օտ 9 ֆեվր. 1931 ր.)**

Դոսյազատ ՇՇՐ Արմենիյ
Երիվան